

# Բ Ղ Գ Ե

Պ Ե Ր Ճ Պ Ո Շ Ե Ա Ն Ց Ի

Նուէր մեծ. բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցին.

Ա.

Բ Ո Շ Ի Տ Ղ Ա Յ

Կարբեցի է կօլոս (էտքահասով) Բղդէն։ Նա այժմ կամ ծերացած, ոտք ու ձեռքից ընկած, մի գիւղի կամ քաղաքի խուլ անկիւնում կեանքի հետ կորիւս է տալիս, հոգէառի անունից օրն ի բուն սարսափի մէջ է, կամ թէ աև հողի միջին որդ ու ժմունքների կերակուր է եղել, եօթը պատան է մաշել, մարդկանց ու Աստուծոյ միշողութիւնից իսպառ մոռացուել՝ չիքերի կարգն է անցել։  
Մեր պատմութիւնը սկիզբն է առնում Բղդէի պատանեկական թարմ ու գէնճ տարիներից։

Այդ այն անցած, մտահան եղած ժամանակներն են, երբ հազար տեղից գուրչ ու փալասով կարկատած խուրջինն ուսը ձգած՝ ամեն մի հական մէջ հինգ չուրուկ շահու (Խօթը կողէն) մանրավաճառի ապրանք դրած՝ գիւղական երեխայի ձեռքով կերտուած խաղաղնդակի նման դղիճ-դլոր գալով գիւղերն էր ընկնում ու չարչութիւն անում։

Շատ բազմատեսակ ու բարդ չէին Բղդէի ապրանքի քանակն ու տեսակները. մի երկու թօփ ասեղ, մի քանի քորոց, մասնոց, կոճակներ, կերակրեղէնի համեմունք՝ զիրա, աև պղպեղ, մետաքսի թել,

մի քանի դազ աժանագին ժապաւէն ու երիզ, գեղջուկ պառաւների տնարարութեան անհրաժեշտ պիտոյքներ, ծամոն, ծծմբապատրոցդ, արեթ, հրահան, շանթաքար և այլ այսպիսի տնտեսութեան համար կարեւոր իրեղէններն էին նորա հարստութիւնն և յոյս ու ապաւէնը:

Երկու, երեք տարի Բղդէն ինքն էր միայնակ թէ ապրանք առնում, թէ ծախում, թէ գրաստի պաշտօն կատարում. վերջը բաղդը խաղաց նորա հետ, կատակ չ'արեց, սրտանց սիրեց ու մի համեստ, ծանրաբարոց, միամիտ, գլուխը միշտ կախ, սակաւապէտ ընկեր էլ շնորհեց, խուրջինը Բղդէի ուսից վերցրեց, Բղդէի բեռը թեթեացրեց, Բղդէին օդնութիւն ուղարկեց:

Մի մարդի հետ որ բաղդը հաշտուի, ամեն կողմից բարութիւններն սկզբումը անձրեսից գոյացած սարալանջերով վազող քչքչան վտակների նման կը տեղան, վերջը վտակները գոչգոչան գետերի կը փոխուին ու մարդի տուն ու տեղը, քունջ ու պուճախը, ծոցն ու գրստնը կը լցնեն:

Ի հարկէ, բաղդաւոր էր Բղդէն, որ մի երեկոյ՝ գիւղերից վերադառնալիս՝ Կարբի գիւղի մօտերքը գնչուների (Էօշայ, ցեդան) կարաւանը նրան հանդիպեց և մի շատ յաջող փոխարինութիւն առաջարկեց:

Բօշայի սև իշուկը հիւանդացել էր, ճանապարհի մէջ տեղն երկար ու ձիգ չորս ոռքը չարդախ էր արել, տիրոջ սիրտն իւր զնչի պէս սեացրել. ոչ ծեծ ու մահակի, ոչ քացու ու հայհոյանքի էր անկաջ գնում, ոչ բարկութիւն ու աղաչառք էր բանի տեղ հաշուում և ոչ տեղիցը շարժուել էր ուղում:

Մոլորուել էին գնչուները. ամակտար, աշխատաւոր իշուկ էր, սպանել, կաշին քերթել՝ ձեռքները չէր զօրում, թողալ, հեռանալ՝ ափսոս էին գալիս:

Որտեղից որտեղ՝ Արագածի իրիգնապահի գիտ քամին պտուեց, մեր Բղդէին գնչուների կարաւանին դէմ բերեց:

— Ի՞նչ տամ, բօշա՛, յանկարծ դուրս թռաւ Բղդէի բերանից:

— Ի՞նչ կը տաս, ջանի՛կա:

— Երկու սիլլա (տղամէ), մի քացի. խեղճ անասունը, որտեղ որ է, շունքը կը փչի, գիշերս քաղցած գալլերի ու բուրդը թափած աղուեմների փորերը կը կշոացնի, լաւն էն չի՝ խուրջնումն գտնուած ծիրանի ձիրը վերցնեք, կեանք ու արել ձեղ բաշխող, բազմաչար-

շար հայվանին ինձ թողնեք, շալակեմ, տանեմ մեր գոմումը վեր քցեմ, կը սատիկի՝ կաշին ինձ համար տրեխ կ'անեմ, կը հագնեմ, ձեզ կ'օրհնեմ. կ'ապրի՝ կմերը միջքին կը դնեմ, գիւղումը ջուր չ'եղած ժամանակը կ'երթամ ձորիցը ջուր կը բերեմ, ինքս էլ կը խմեմ, ուրիշի սիրտն էլ կը հովացնեմ, ձեզ էլ վարձք կը լինի, ինձ էլ:

Գողն ի՞նչ կ'ուզի՝ մութը գիշեր. չիրը խախալի մէջ դարտակուեց, գնչուների բոբիկ երեխաների սիրտն ուրախացաւ, Բղդէն էլ գրաստի տէր դարձաւ:

Էշն էլ խելք ու խմաստութիւն է ունեցել. հէնց որ Բղդէի մօր գոզնոցն առջեւը փոռւեց, գարու հոտը քթովը դիպաւ, դիրքը փոխեց, իրան ուղղեց, գարին կրտսըրտալ սկսեց, քիչ քիչ տեղիցը կանգնեց, գարին բոլորը մաքրազարդեց, Բղդէի հետ եղբայրանալն աւելի ձեռնոտու համարեց, քան թէ գնչուների չարաճճի մանուկների տուած Յուդայի տանջանքը:

—Մէկ չը լինինք, երկու լինինք, իմ սիրելի բօշի տղա՛յ աս անունը տուեց իշուկին Բղդէն ու խուրջինը նորա պարտականութիւնը շնեց:

—Զօ՛շ հա չօ՛շ, չո՛ւ հա չո՛ւ անելով այնուհետև՝ սիրտն ուրախ, քէֆը քոք, դամաղը չաղ, դէմքը զուարթ՝ առաջ էր անում Բղդէն բօշի տղին ու ինքը նորա քամակից, գերեմաստի ծառից կտրած մահակը ձեռքին, լուսածէզին դուրս էր գալիս Կարբուց, մինչեւ իրիկուն թափառում էր Կարբու շրջակայ գիւղերումը, արևմտոցին մտմտալով, փթփթալով, Քեօրօղովով խաղերից իրան լսելի ձախով դունդրունալով, երգելով, դառնում էր Կարբի՝ աչքը ճամփին սպասող իւր պառաւ Սալբի մօրն ուրախացնում, նորա եփած ձաւարի վահկը (արգանակ) խփշտում, փորը կշտացնում, իւր մարմնին էլ հանգիստ տալի, բօշի տղի ոսներին էլ:

Կատաղի էին այն ժամանակուայ շները. օտարական պանդուխոր մեծ դժուարութիւնով էր կարողանում անցկենալ արևելեան ազգերին յատուկ գիւղական նեղ փողոցներով, փոքր էր մնում գաղանները ծուիկ ծուիկ անէին. ձիաւորին ձիուց էին ներքեւ քարշում, եթէ գիւղացիներից օգնութիւնն ուշ էր հանում. իսկ կօլոտ Բղդէի հետ բօլոր սարսափելի գամբոները հաշտ էին:

Հաւատարիմ տնպահները, ճաշուայ շոքին, բակի դրան շէմքէն

առաջին մի կողքի ձգուած, երբ Բղդէի խոպոտ, հազարային ճայնն առնում էին, բրդոտ, կեռիկ պոչերն երեք անգամ գետնովն էին տալիս, ողջուներու նման մի շարժում էին անում ու նորից անձնատուր լինում րոպէական հանգառութեան։ Պառւուկ տատի օրօրի նման անոց էր հնչում կատաղի օտարատեացների ականջին կօլոտ Բղդէի սովորական հետևեալ մեղեդին։

—Խանում-բաջինե՛ր, թել առէ՛ք, ասեղ առէ՛ք, ձութ ու ծամն առէ՛ք, քիշմիշ ու նօխուտ առէ՛ք, ձեր պատուածները կարկատեցէ՛ք, ձեր ակռաների (տառ) ջաղացքը բանեցրէ՛ք, ձեր կտուցը քաղցրացրէ՛ք, ձեր ճժուկ-պժուկի (ժանուէներ) պզզոցն ու փացոցը կարեցէ՛ք։ Աղապ աղջիկնե՛ր, օտարի ապրանքնե՛ր, աչքի սուրմա (բեղ) առէ՛ք, դեղադրիք առէ՛ք, հիլ ու միխակով բերաններդ անուշացրէ՛ք, ջուր արէ՛ք՝ դիմներդ ու դօշներդ քսեցէ՛ք, ջահէլ կարիճների սիրու գողացէ՛ք, վիզը փաթաթուեցէ՛ք, դիմներուն ցաւ, թիկունքներուն բեռ դարձէ՛ք։ Տօ՛, սատանի ճագե՛ր, անդնջում ճժե՛ր, դուք իմ անբաժան սրչուկնե՛ր, ինձնէ հեռացէ՛ք, ձեր մամերու (տառ), ձեր աղէներու (ժայր) դիմիսը տարէ՛ք, քաղցր քիշմիշիս տոպրակը պարպեցէ՛ք (բագարբիշել), ծամոնիս լիքը պարկը դատարկեցէ՛ք։ տօ՛ դւեի լակոտնե՛ր, աներես սրթինե՛ր, ի՞նչ էք չորս կողմս շարուել, ճամփախս արգելում, քէլէ՛ք (գնացէ՛ք) չիր, փշատ, բամբակ, ալուր, բրինձ գողացէ՛ք, բերէք խուրջինս տկողեցէ՛ք, ծամոն ծամեցէ՛ք։

—Դէ՛ լաւ, դու մեզ հայհոյում ես հա՞, կօլոտ Բղդէ՛, ուրեմն կերթանք, ել քամակիցդ չենք ընկնիլ, սպառնում էին մանուկներն ու հեռու քաշուում։

—Տօ՛ ձեղ զուրբա՞ն, ձեր մօրը զուրբա՞ն, լեզուիս ի՞նչ կաշէք, սրտիս աշեցէ՛ք, աչքս հանէք՝ ձէն չեմ տալ, ըմէն ձեզ փէշքա՛շ, եկէ՛ք, իերէ՛ք, փշացրէ՛ք՝ թաք ինձնէ մի՛ հեռանաք։ իսկոյն սիրտն առնում էր նա մանուկների և մի բուռը չամիչ հանում, նրանց բաժանում։

Բղդէի ամենից արդիւնատու յաճախորդները գիւղերի փոքրիկ չարերն էին, քան թէ խանում-բաջիները. բայց երեխաներից աւելի նա սիրում էր քունջ ու պուճախից իրան ձեռքով անող, մօտ կանող գնորդներին։ Սիրուն նորահարաներն էին վերջիններս ու արբանքի մտած, իրանց ճանաշած աղջիկները, որոնց անունը լուսաւրեալ աշխարհքումը «օրիորդ» բառով է կնքուած։

Բօշի տղի բնազրումն աւելի էր զարգացած, քան թէ Բղդէի ուշք ու միտքը. Հէնց որ տան մեծը, տան աղամարդը, սկեսուրը, սկեսայրը, ամուսինը, տագրը, եղբայրը մի տանից հեռանում էին, բօշի տղան, ալդ տան առջելից անցնելուս, ոոքը ծանրացնում էր: Բղդէի աշքն էլ իւր հարազատ եղբօր—բօշի տղայի ոոքերին էր, ձեռաց նա էլ փայտն էր սիւն տալիս, կանդ առնում փողոցումն ու մեղեդին զլում:

Ահա՝ դուրս էր սողում հացատան անկիւնից մարադ մտած կատուի նման քօղը մինչև կուրծքը ցած թողած, երեսը ծածկած նորահարսը. նա ձախ ձեռքով բարձրացնում էր կարմիր մետաքսեաց քօղը և աջով նշանացի ներս էր կանչում կօլոտ Բղդէին դէպի ամենամութ խորշը:

Մի անագեաց ասեղաման, մի սև ոսկրեաց դեղադիի (առեւել դեղլու գործիւ), աչքեր թխացնող փոքր ինչ փոշի՝ նորատի ամուսիններին գրաւելու ճիշդ միջոց, մի քանի միխակի հատիկներ, մի երկու շարք գոյնզգոյն դիւրագին ուլունքներ,—ահա՝ սրանք էին սիրաբորբք նորահարսի առևտրի առարկաները: Մի մեծ ամանով ալիւր, մի երկու տասնեակ ձու, մի քանի բուռը բրինձ, ձաւար, ձէթ, իւղ և տանը գտնուած ամենատեսակ բարիք, ինչ կուզէ թող լինի, քարից փափուկ լինի, ուրախութեամբ ստանում էր Բղդէն իւր ծախածներին զին և սև իշուկի շալակը ծանրացնում:

Զգոյշ էին սիրուն հարսները, նրանք շատ հեռաաես են, հում գործ չեն բռնիլ. նրանք քաջ գիտէին, որ վայը կը գար իրանց արեին, սկեսօր բռան մէջ կը մնային իրանց ծամերից քաղած մազերը եթէ իրանց առուտուրը յայտնուէր, կամ մէկը նրանց տեսնէր Բղդէի հետ ձեռք ու ոոքով, իշարաթով (Կշանացք) խօսելիս: Հնարքն առաջուց մտածուած էր, զգուշութիւնները ձեռք էին առնուած. ահա բակի դուռը ծերպ արած (Խեռաբաց) այնքան, որ աչքի մինը հազիւտեղաւորուէր, հսկում է հարսի սրտակիցը՝ տան մէջ նորա հետ միակ խօսակից ընկերը՝ նորա քաղցրալեզու տալը՝ նորա ամուսի մարդու տանելու քոյքը՝ տանու օրիորդը:

Մի հազոց, մի թեթև ծափ աղջկաց կողմից բաւական էր գեղեցկուհի շողակն քնքուշիկին յական թօթափել իւր վարագուրի տակը հալածուելու համար:

Միջանկեալ ասենք, որ վաղ ժամանակը ո՞ր տան անկիւններից մէկում տեսնէիր վարագոյր կախուած՝ իսկոյն կը հասկանալիր, որ այս տարի այն տեղ մի պսակ է կատարուել, տան կեցողների թուումը մի շնօսքան անդամ է աւելացել, տան ջահէլ տղամարդի կողքը տաքայնող է եկել, Մինչև տարին չը բոլորուէր, ոչ վարագոյրն անկիւնից կը վերացուէր, ոչ հարսի երեսից քօղը. մի օտար ոտնաձան առնելուն պէս, իւղը կրակին երուելուս լինէր, հարսը պարտական էր ձեռքից թողնել, վարագուրի տակը խցկուել:

Կօլոտ Բղդէն վարժ էր իւր արհեստի մէջ. օրիորդի նշանները նրան էլ զգաստացնում էին, յառաջ էր գալիս նա բակի մէջ տեղն ու իւր նշանաւոր երգը շարունակում:

Նատ լաւ գիտէր Բղդէն, որ ինքն ուրիշ չարչիների վերայ մեծ առաւելութիւն է ստացել իւր ման եկած գիւղերումը. այդ մի գաղտնիք էր, թէ ընչո՞ւ ամենքը վատահ էին կօլոտի հաւատարմութեան վերայ. ոսկին որ սինով (ափօ՛) դրած լինի, Բղդէն վրէն խէթ աչք չի ծովիլ. —ահա՛ այս կարծիքն էին կազմել գիւղացիք Բղդէի վերայ:

Բայց թէ այդպէ՞ս էր արդեօք, ոչինչ բանի ձեռնամուխ չէ՞ր լինում նա տանն Արամարդի չեղած միջոցը, խուրջնի մէջ կամ գրպանը չէ՞ր մտնում անալին որ և է գործիք, —այդ Բղդէին ու սատանալին էր միայն յացտնի, Աստուած այդպիսի տեղերումը գործ ու հաշիւ չունի:

Այսքանը միայն պարզէ, որ ամիսը մի անդամ կօլոտ չարչի Բղդէն երկու լիքը մազէ թեռեր (պարէ) միմեանց կարած, իւր սիրելի բօշի տղին բարձած, մի փայտեաց խթան ձեռքին բզելով՝ Արարանու եղնակարաւանի հետ ճանապարհորդակից եղած՝ անցնում էր Աշտարակու կամրջովը գէպի Երևան:

—Զա՞ն, ջա՞ն, նորա շուրջը ոստոստալով՝ ճամփու էին դնում Բղդէին գիւղական մանուկները մինչև կամուրջը, Բղդէն իւր գրղացած մանրունքը տանում է Երևան ծախի, ապրանք բերի, երկուերեք օրից յետոց լիութիւնը կ'ընկնի, բերաններս կը քաղցրանայ:

Այս չարչիութեան երրո՞րդ, թէ շորրորդ տարին էր:

## Բ.

## ԿԱՐՔԻ ԱԽԱՆՔ

Պատմութեան մէջ շատ վաղ ժամանակներից է յայտնի Կարբի աւանը. նորա հռչակի համար, արդարեւ, մեծ լիշտակութիւններ չը կան, բայց ի հնուց անտի Արագածոսն զաւառի արևելահարաւային կէսը Կարբու անունն է կրել, Կարբու զաւառ է կոչուել: Արագած մեծանիսու ու ծաղկաւէտ սարի հարազատ զաւակ Քասախ գետը, թողած իւր հայ աշխարհքի համար պարծանք, քրիստոնէութեան օրօրան էջմիածինը՝ ահեղազօր Տրդատի սիրելի մայրաքաղաք Վաղարշապատը, որի դաշտերը ուսոգելով, որի հողը լիզելով գնում, ողջունում է հայ աշխարհի Մայր-Արաքսին և նորա ծոցումը հանգըստանում, այդ Քասախն էլ, ասում ենք, շատ երկար ժամանակներ Կարբու գետ է կոչուել, Կարբու անունովն է ճանաշուել: Այսքանը բաւական չի, մինչև այսօր մի երգի վերջաւորութիւն—թափշուրամայ կայ, որ Կարբուն վաճառաշահ քաղաքի փառքն է ընծայում: Եթէ երգը մոռացուել է, որից շատ պատմական մանրամասնութիւններ կարող էինք հետևեցնել, բայց թափշուրամի տողը շատ բան է պարզաբանում:

Ահա՛ թէ ի՞նչ է պտըտում իբրև առած ժողովրդի բերանում: «Դուքան-բազարն է Կարբի»:

Իսկ դուքան-բազարներ միացն հին ժամանակը մեծամեծ քաղաքներում են տեղի ունեցել:

Քանի մի տարի առաջ, մեր աչքով տեսած բանն է, քարակոյտների ու ողբալի աւերակների խառն ի խուռն և անկանոն դիզուածքներ էին Կարբու մեծ մասը. տեղ տեղ միայն տիսուր տպաւրութիւն էին անում մարդու վերայ աւերակների մէջ ցցուած անշուք բնակարանները, որոնք կէս դարից դէսը կարկատուել, վերաշինուել և իրանց տակ տեղ են տուել Հին-Բայազիդից զաղթած մեծաթիւ զաղթականութեան մի փոքրաթիւ հասուածին. և ի՞նչ շէնք ու շինութիւններ. հին փառաւորութեան հետքը չի նշմարուում ոչ հիմա, ոչ մօտիկ անցեալումը. անճաշակ ու աղքատիկ միարկ խրճիթներ են բուսել կամարակապ և քարակերտ պալատների տեղ:

Հին հոյակապ քաղաքից շեն և անվսաս էր մնացել միմիայն հինաւուրց սագաձեւ ճարտարապետութեամբ կառուցած ամբապինդ տուրբ տաճարը, դրանք են Կարբու մայր եկեղեցին և իւր նշանաւոր զանգակատունը՝ մի քանի կանգուն տեղ իրարից անջառուած. նրանք մշտամուռնչ ականատես և կենդանի վկաց են եղել այսօրուան փլատակների նախկին փառազարդութիւններին:

Դարեր եկել, սահել էին, կործանիչ բոնակալ ձեռքեր խարբաւել, հիմն ի վեր էին տապալել Կարբին, նորա ամեն մի քարը տասն անգամ շրջարջել էին, թէ ի՞նչ է, իրանց ագահ ընչաքաղցութիւնով կարողանան մի պահեստի տեղ, մի ծածկած գանձ գտնել. բայց աներեւոյթ մատն ամենքի վերաց սարսափ ու զարզանդ է ազդել և թող չի տուել անսուրբ ձեռքերին դիպչել, մօտ գալ իւր նուիրական տանը:

Հարկաւ, մի սուզ անող, մի լալկան պէտք էր այս լուռ դամբարանի վերաց և հէնց այդ ողբերգուն մնացել էր Աստուծոյ տուրբ տաճարը—Կարբու եկեղեցին. Սև սև քարերի ծերպերից բուսած կանաչներն են տառապետալ և վշտակոծ այրու զզզզած մազերը, պատերի և առաստաղի վերաց մնացած խոնաւութեան հետքերն են նորա չորացած արտասունքը, տեղ տեղ բնութեան հարուածներից մաշուած և դուրս թափուած քարերի խոռոչներն են նորա վէրքերը:

Լոել են Կարբու սաղմոսերգութիւնները, այլ ևս չի հնչել ժամ հրաւիրող կոչնակի ձայնը և միայն գլխակեր բուն փոխարինել է կոչնակ զարկող ժամկոչին:

Այսօր էլ չեն քերուել Կարբու եկեղեցու Կիզի—մատուռ անունով զանգակատան գլխից գիշակեր թռչունների ապականութեանց հետքերը:

Կարբու դիրքը ներկայում խիստ մեծ չէ. բայց, ինչպէս երեսում է, նա շատ լայնանիստ տեղ է բռնել. բուն Կարբուց մի ժամաշափ հեռու մի աւերակ կայ, որ Հին Կարբի անունն է կրում. այդքանով էլ որ չը բաւականանք, շատ անգամ ամայի և խոպան տեղը վարելուս Կարբու շրջակացքում՝ գութանի խոփը բանդ է ընկնում մի հին սրատի, մի կիսաքանդ շէնքի, որից երեսում է, որ իւր ժամանակին նա մեծ տարածութիւն է ունեցել:

Բայց զարմանք բան է, թէ այդ նշանաւոր քաղաքն իւր բազմա-

մարդութիւնով ի՞նչպէս է կառավարուել առանց ջրի: Անուշահամ Քասախ գետը, որքան և Կարբու անունովն է կոչուել, բայց կարբեցուն միշտ սակաւամատչելի է մնացել. անդնդափոս ձորը, որի միջով գժի նման գոռում-գոչում անելով վազում է Քասախը, իւր վիթխարի ժայռերով և զժուարագնաց մուտքով այսօր էլ անհիւրասէր է դէպի Կարբին:

Մի գետակ կաց միայն, այդ Դալի-շայ անուն կրող Արագածի զաւակներից մինն է, որ ոռոգում է Կարբին և իւր շրջապատող Արագածի լանջի վերաց լնկած գիւղերը. իսկ այդ գետակը շատ անբաւականացուցիչ է Կարբու և մի քանի ուրիշ գիւղերի համար:

Այսպէս թէ այնպէն՝ Կարբին մի պանծալի դիրք է ունեցել և իւր ցրուած ու տարագրուած ժողովուրդը վաճառականութեան ու ճարպիկութեան մեծ լնդունակութիւն է ցոյց տուել:

Միայն շդուքան-բազարն է Կարբին խօսքերը չեն, որ կարբեցու առեւտրականութեան յաջողակութեան ապացոց են. տեղական բնիկները կարբեցուն կոչել են և կոչում են սատանախար կարբեցիք: Այս խօսքերին իբրև հիմունք մի կարճ առակ ևս մնացած է, որով որոշուում է կարբեցու սեպհական ձիրքը:

Ահա՛ այն առակը: — Մի անդամ, որպէս թէ, մեծ վիճաբանութիւն է ծագել կարբեցու և սատանայի մեջ. արևի ծագումն է, եղել նրանց հակածառութեան շարժառիթը. նրանցից ամենն մէկը պարծեցել է իւր հեռատեսութեամբը. պայքար են մտել, դաշն են կապել, մեծ վճարք են դրել, թէ ո՞վ իրանցից շուտ կը տեսնի արևի ծագումը:

Արշալուսից էլի կանուխ՝ երկուսն էլ կանգնել են որոշեալ տեղում. դէպի արևելք է սեւեռել իւր աչքերը սատանան և սրտատըրովի սպասել է երկրի լուսատուն տեսնելու և դաշը շահելու: Դէպի Աւագ-Մասիսի երկնածայր և ալեզարդ կատարն է նազել ճարպիկ կարբեցին:

— Յաղթութիւն, ծափ զարկելով ձայն է տուել կարբեցին և ցուցամատով պիմադ խթել է իւր հակառակորդի կողը:

— Ի՞նչ է:

— Զօռն ու ցաւը պինչդ է, կոյր ես ու Աստծու երեսից լնկած. ի՞նչ ես դունչդ արևելք ցցած մնացել՝ զարու հոսին քիթը վեր

քաշած իշխ պէս, աչքդ արևմուտք դարձրո՛ւ, ահա' պազզում են Մասիս պապի արծաթափայլ մազերը, չե՞ս տեսնում, ձիւնի ոսկեշաղ հատիկներն անդին ալմաստի պէս աչք են ծակում, հիմի աչքերիդ եղած լոյսն էլ կը կտրեն:

—Իրաւ, որ աչքով էլ, մոքով էլ կոյր եմ եղել, որ աշխարհքի սաեղծագործութիւնից մինչև էս օր հարիւրաւոր փորձանք եմ հասցրել այս աշխարհին ու ոչ մի օր չեմ նկատել, թէ Մասիսն է իւր վիթխարի հասակովն արևին առաջին բարեւը տուողը, խոստովանում է անկոտրումը:

Ուղիղ էր սատանավի խօսքը. հայ աշխարհի համայն լեռների կատարների վերայ է մայր-Մասիսի—սրբազնն Արարատայ հսկայական հովանի աչքը. Մասիսի գագաթի արևելահայեաց կէսն է ծէգաբացին դիմաւորում լուսաւորների թագաւորին, իսկ երեկոյեան, ժանգառքից յառաջ, նորա արևմտեան երեսն է առնում աշխարհիս արտաքին մակերևոյթը խաւարի մէջ թողնող հեռացողի վերջին հրաժեշտը:

Ահա' այդ ճարպիկ ժողովրդի, այդ առետրականութեան ընդունակ մթնոլորտի զաւակն էր կօլոս չարչի նղդէն:

## Գ.

### ԲՈՒՆ ՈՐՏԵՂԱՑԻ Է

Կարբեցի էր, ասում ենք, կօլոս Բղդէն, Կարբու հող ու ջրի սնուցած, մեծացրած, չարչութեան պատուին արժանացած այդ գունդ ու կծիկը, այդ փշատի ծառի ծոտիկ-մոտիկ բունը:

Եւ արդարե, մարդ մոլորուում է Աստծու քնած ժամանակն սաեղծուած այս մարդանման զանգուածքին մի ուրիշ առարկայի հետ համեմատութիւն անել կամենալիս. իսան ասես՝ իսան չէ, Աղամարդի ասես՝ Աղամարդի չէ. մարդ լինէր, մարդանման ուղղակի իւր ճանապարհը բռնած յառաջ կերթար, կամ յետ կը գար. չորքոտանի՞ է, այն էլ՝ հազիւ թէ, մենք տեսել ենք, որ չորքոտանիքը մի բնորոշ մանգալու ձև ունին. իսկ մեր տնաքանդը գոնէ երկոտանու և չորքոտանու մէջ տեղը մի ուրիշ շարժուն էակ ներկայացնէր:

Ամենից յաջող համեմատութիւնը հնարել են կօլոս Բղդէի մանեկած զիւղերի երեխացքը:

—Ե՞ս, հրէ կօլոս Բղդէն իւր բօշի տղին յառաջն արած՝ Մողնու թառովը ներքեւ է գալիս, հէնց իմանաս՝ արջի երկու տարեկան քոթոթ լինի:

—Արջի քոթոթն էն չէ՞ր, որ հերու Թարվիզի լօթիքը բերին մեր կալումը խաղացրին, նա խօ' դուզ մանգալ ունէր:

—Դէ՛, ասա՛ նառ ուղար է էլի, գօշը դուրս պրծած, ոտ փոխելուս էլ լնգինգում, տմբտմբում է:

—Ընչի՞ էք ձեր հոգուն մեղք անում, ուղար, զորթ է, գնալուս տմբտմբում է, բայց ճամփէն ու զիղ է գնում. Բղդէն էդ շնորհքն ունի՞, մի լաւ մտիկ տուե՞ք, — մի ոտն աջ է գցում՝ մինը ձախ, օձի պէս կորոկոլը է անում, կուտապ-կուտապ է գալիս:

—Թէ ըտէնց է, օձ ասենք ու պրծնենք:

—Օձն ափսոս չի՞, բարա՛կ, շարմա՛զ:

—Բաս ընչի՞ նմանացնենք:

—Ես գտայ, ուրախութիւնով յառաջ վազեց մինն այն կողմիցը. ծառի փտած քոթուկը (կոճղ) որ ճղում ես, վախտ վախտ միշիցը միահաւասար կարծ ու հաստ որդեր են գլորուելով ներքեւ ընկնում, ոչ գլուխն է երևում, ոչ պոչը, շարժուելուս գլուխը աջ է գնում, պոչը ձախ, իստակ ծառի որդ է, որ կաց:

—Ծառի ո՛րդ է, ծառի ո՛րդ է Բղդէն, թռչկոտացին, կայտուեցին միասին ծափ տալով մանուկները:

—Ծառի ո՛րդ կօլոս Բղդէ, ծառի ո՛րդ կօլոս Բղդէ, պարբռնեցին ու շրջապատեցին նրան:

Այդ համեմատութիւնն ընդհանուր հաւանութիւն գոտաւ. Բղդէի կօլոս անունին մի ուրիշն էլ աւելցաւ:

Զար մանուկների խօսքին կշիռ էլ դնելով, մենք ճանաչենք նրան ընդ միշտ կօլոտ Բղդէ և ասենք, որ կարբեցի էր:

Բայց ցաւն այն է, որ մեր կորական վճռովը խիստ մեղանչած կը լինենք. Կեշու չէ որոշակի անուն տալ նորա հայրենի տեղին:

Ա՛յ, թէ ի՞նչպէս:

Ամենքիս յայտնի է, որ գարուս առաջին քառորդին մի մեծ գաղթականութիւն տեղի ունեցաւ հայ աշխարհումը. — Կարապետ

սրբազնը պոկեց Օսմանցուի բաժին Հայաստանից մի ահագին բազմութիւն և բնակեցրեց ոռուսի ձեռքը նոր անցկացած հայ երկրում:

Դրանցից զարսեցիք Գիւմրի եկան, արզումցիք՝ Ախալցխայ և Ախալքալաք, բասենցիք՝ Աբարան. իսկ հին-բայազիդցիք երեք կտոր եղան: Նրանցից մի մեծ հասուած իրան համար կենդրոն ընտրեց Սևանայ լճի շորս կողմը: Նրանք՝ իրանց հին հայրենիքի անունը իբրև և միսիթարանք և սրտներին հովութիւն բերած՝ հիմնեցին համեղ, անմահական իշխանաձիների հայրենիքումն իրանց նոր քաղաքը և նոր-Բայազէդ կնքեցին: Մի քանի տուն էլ հարուստներից յարմար զատեցին Դարսից Գիւմրի փոխուած հաջի աղաների հետ հարեւանութիւն անել, ուղղակի քշեցին եկան Գիւմրի. իսկ մի փոքրիկ կտոր էլ ընդհատուեցին իրանց հայրենակիցներից և Կարբի հին քաղաքատեղումը բնակուեցին:

Եւ ահա՛ այս Կարբի գիւղում, Բայազիդից գաղթելու առաջին տարին, ամեն ծննդաբերներից շուտ, Կարբի տուն գալու ոտնամուտը շնորհաւորեց Պօղոս աղայենց հովուի կին այրի Սալբին և շնորհեց Կարբուն մի անդրանիկ արու զաւակ՝ մեր պատմութեան հերոս կօլու Բղդէին:

Ո՞ր տեղացի է ուրեմն մեր պատուական բարեկամը. կարբեցի ասելով՝ Բայազիդին կը վիրաւորենք, բայազիդցի կոչելով՝ Կարբուն սրտաթման կ'անենք:

Թո՛ղ կօլու Բղդէի երկու հայրենակիցներն, ինչպէս կամենան, իրար հետ հաշտուին, մենք աչքներս բաց ենք արել և ոչ միայն Բղդէին իրան, այլ Կարբու բոլոր ներկայ բնակիչների համար կարբեցի անունն ենք լսել. այդ հայրենիքն էլ նրան կը սեպհականենք:

Եւ մեղանչած էլ չենք լինիլ:

Երկու հայրենիքը՝ Կարբին և Հին-Բայազէդը, իրաւ է, երեք օրուան ճանապարհ միմեանցից հեռու են. մինը Մասիսի հարաւային երեսումը՝ Օսմանցուի ձեռքին է մնացած, միւսը Արագածի թմրին սուսի սեպհականութիւն է դարձած՝ բայց մի որակութեան մէջ, կարծես, միանում են. թէ Բայազիդումը ծնած ու մեծացած և էս օր էլ այնտեղ մնացած հայը և թէ Կարբու էս օրուայ պտուղները, կարծես, մի խնձոր լինին՝ միջից կիսած, մի հօրն ու մօր դատած ու բերած զաւակներ: 50, 60 տարի է անցկացել, գնալ-զալ, բարեկա-

մութիւն, ազգականութիւն մոռացուել են, երկու-երեք սերունդ են մին մնի յաջորդել, բայց երկու ժողովրդի դէմքերի երկարաւուն գծագրութիւնը, բարբառը, (որ կարնեցու և ալաշկերտցու բարբառից կազմակերպուած մի խառնուրդ է աւելի դէպի Ալաշկերտցին հակուած հնչումով), ներքին տնային սովորութիւնները, (թող նորբայազեղը ճարակող վերջերումն նորամուտ կեղծ քաղաքակըրթութիւնը և տնաւեր շռացութիւնը) և որ զիսաւորն է, բը նածին ընդունակութիւնները մի և նոյն հօր զաւակն են համարում նրանց: Թէ բայազիդցին և թէ կարբեցին երկուսն էլ ճարպիկ են, երկուսն էլ խելօք են, երկուսն էլ ամեն բանի մէջ կորուկ են—ջրաղացի բուգը ձգես՝ դուրս կը գան, քարիցը իւղ կը հանեն եւ ի՞նչ է այստեղ ապացուցուում:

Այ ի՞նչ: —Մենք տեսանք, որ հին կարբեցիք «զուքան-բազար» են ունեցել, վաճառական ժողովուրդ են եղել, «սատանախար» անուն են տարել—ուրեմն խելքով օժտուած են եղել. իսկ նոր կարբեցիք նոյն ընդունակութիւնները և նոյն բնաւորութիւնն ունին. կճուծը զլորուել, խոփը գտել է. արժանաւոր հօրն արժանաւոր որդիք են վիճակուել:

Նատ չէին կարբու նոր բնակիչները. 50, 60 տուն ընդհատուեցին ամբողջից և կարբու աւերակները շէնացրին:

Վարչութիւնը չը միջամտեց նրանց տեղաբնակութեան բաժանման մէջ:

Իրանց միջի պատուելիները, որոնք աղայական իրաւունք և նահապետական արտօնութիւնն էին վայելում, այստեղ էլ նոյն մենաշնորհութիւնն ունեցան, խելք խելքի տուին, չափեցին, ձևեցին, աւերակները հետախուզեցին, լաւ տեղերն իրանց վերապահեցին, մնացածը հասարակ ժողովրդի վերայ բաժին բաժին արին:

Սալլին երիտասարդ այրի էր, նորա ամուսին մի աչքանի Գսպէն Պօղոս աղայենց հին տան ամալան երիցն էր, աչքը բացել էր և Պօղոս աղայենց շնչաւոր կենդանիների թուումն իւր զլուխն էլ տեսել էր:

Եւ որովհետեւ ամալան մի տեսակ սեպհականութեան պէս բան է իւր տիրոջ համար, թէև ոչինչ քաղաքական կամ մասնաւոր պայմաններով կապուած չէ, այլ նահապետական աւան-

դականութեան վերայ է միան հիմնուած, այդ պատճառաւ աղայի պարտականութիւնն է իւր սոորին անդամի, իւր հացափոր ծառայի—իւր ամալայի ամենատեսակ հոգսերը քաշելու:

—Տո տղա՛յ, Գոպէ՛, էդ ի՞նչ ա:

—Գլխուդ խուրբա՞ն, գառն ա, ասաց և թաղիքեայ կուլաբ կրչուած հովուական վերարկուի տակից մի կայտառ, ձիւնանման, սպիտակ, ճակատը ծաղիկ, օիրուն գառնուկ հանեց Գոպէն, զլուխ տուեց իւր տիրոջը ու տան մէջ բաց թողեց:

Յունվարի վեցն էր այդ օրը. Պօղոս աղան իւր ընտանիքի հետ Ֆրօրհնեաց հանդիսին եկեղեցումը ներկայ լինելուց յետոյ՝ իւր գերդատանի արական սեռի հետ նատած՝ ուրախ տրամադրութեամբ ճաշ էր վայելում:

Երեխացքը ճաշը թողած՝ վեր թուան և գառանը փաթաթաւեցին:

—Տո տղա՛յ, Գոպէ՛, դու էդ գառ էս ձմեռուան կիսին յո՞ւտ և բերում ես, հարցրեց քաղցր դէմքով Պօղոս աղան:

—Գոպէն քո սաքի տակի խողն է, քո սայից (է շնորհս ժա), աղա՛յ, բալաք (խոյտոբէնկտ) մաքին (էդ ոչոտը) աշնան դէմ ծանրեր էր, երկու ամիս կայ, որ ծնաւ. ես լէ պահեցինք, աչք ունեցանք վրէն, ջոջացրինք ու բերինք քեզ փէշքէշ, ասաց Գոպէն և կրկին դլուխը տաճկական ձեռվ ծուելով՝ աջ ձեռքը նախ գեսնին տուեց, ապա բերանին մօտեցրեց ու դլիսի վերայ դիեց: Այս նշանակում է՝ ես կոանում և իմ գլխի տիրոջ սոտքը համբուրում եմ:

—Տօղա՛, դու որ մեզի ուրախացրիր էս ազիզ օրը, ես էլ քեզի կուրախացնեմ: քո բեխեր, հա՛, հա՛, սեացեր են, ջոջցեր ես, օրերդ հատուկ են, էս բարեկենդանքին քեզ կը կարգենք (պատկէլ), մեր մէհտար (չետառն) Բդէի խորոտիկ Սալրի աղջկան կ'առնեմ քեզի:

Գոպէի քէֆը քոք եղաւ. Պօղոս աղան ասածը կատարեց և յիշուի բարեկենդաններին մի շաբաթուայ մէջ նշանեց ու պսակեց նրան:

Աղայի աւանդապահ ամուսինը՝ Ալմաստ խաթունը՝ շատ դիմադրեց, պնդեց պահպանել տեղական սովորութիւնը. նախ նշանել, մի երկու տարի նշանած պահել, վերջը պսակել. բայց Պօղոս աղան իւր խօսքին տէր կացաւ և նախնական սովորութիւնն առաջին անդամը քանդեց:

— Աշխարհը մեզ կը բամբասի, քիթը ցցեց խաթունը։  
 — Ոչ ոք բան չի՝ ասիլ, ապացուցեց աղէն. եթէ մենք ուրիշ  
 աեղից աղջիկ ուղէինք, բաշլուղ, սուդ հախի<sup>1)</sup> տայինք, ամեն  
 ոք իրաւունք ունէր տրանջալու, կամ մեր վերաց խօսելու. բաց մենք  
 մեր մի ամալացի աղջիկը միւս ամալացի տղին ենք ուզել, աղէն էլ  
 մերն է, աղջիկն էլ, երկուսին ուտեցնող, հազցնողն էլ մենք ենք,  
 երկուսն էլ մեր տան անդամներն են, մի օր պէտք է ացդ պսակը  
 կատարէինք, և քանի շուտ՝ այնքան լաւ. Ուրիշ բան էր, եթէ մեր  
 ամալացի աղջիկը տայինք ուրիշ աղայնոց ամալացի տղային, կամ  
 նրանցը մենք ուղէինք, այն ժամանակ նշանածներին երկար միջոց  
 կը պահէինք, բաշլուդ էլ կը շնէինք, սուդ հախի էլ կը տայինք։

Պօղոս աղան իրաւունք ունէր. երկուսն էլ իրանց ամալաներն  
 էին. Այդպիսի ամալաներ խոր գիւղերում մէլիքների, առաջաւորնե-  
 րի և ռէնսերի դրանը այսօր էլ կան և սրտի մոոք ու անտրտունջ  
 ծառալում են։

Նրանց պահանջը շատ չէ. մի կտոր ցամաք հաց, մերկութիւնը  
 կիսով շափ ծածկելու հնոտիներ աղայի կողմից, և ահա՛ նրանք  
 կեանք չեն խնացում տիրոջ ու զուրին։

Ամենից ժիր մշակը, ամենից հաւատարիմ և սրտացաւ անդամը  
 աղայի տան համար՝ ամալան է; Թո՛ղ ուրիշը տասնապատիկ առա. ել  
 փափկութիւններ և վարձատրութիւններ խոստանաց, ընչով կ'ուզէ,  
 թող հրասպուրի, ամալան իւր աղայի տան ցամաք հացը բոլորից  
 կը գերադասի, նա իւր աղայի չոր հացին կոյր չի մտիկ տալու։

Բացց եթէ ամալան գրաւուի բանսարկուների խոստումներից,  
 կամ ինքնաբերաբար մտածի թողնել իսպառ իւր տիրոջ շեմքը, ոչ  
 ոք նրան դէմ չի կենալ, նա ազատ է իւր ընտրած ճանապարհը  
 դէնալու։

Ամալան իրաւունք ունի մինչև անգամ առանձին տուն ու տեղ

<sup>1)</sup>) Բաշլուդ և սուդ հախի. առաջինը նշանակում է զլսակին,  
 յրկրորդը՝ կաթի պին. սոքա անագին վճարքներ էին, որ հին ժամանակը  
 միստացուն տալիս էր իւր անելուջը. Այսդ հախին գոբանչին լատուկ ըն-  
 ծառ էր, Ակմամ էլ շատ նահապեսական տեղերում զիո չի վերջացել ակա-  
 սովորութիւնը.

դառնալ, իւր սեպհական վար ու ցանքսն, իւր տնտեսութիւնն ունենալ և միաժամանակ իւր աղայի տանից ոտքը չը կտրել:

Եւ աշա՛ Գողոս աղայինց ամալայ Գողէն՝ սիրուն կնոջ մարդ եղաւ, ընտանեկան քաղցրութեան ճաշակն առաւ:

Անբաղդ մա՛րդ, ճակատագիրն այլապէս էր տնօրինել. Ռուս-Թուրքական առաջին պատերազմը նորա կենաց թելլ կտրեց, դաղթականութեանը զոհ գնաց Գողէն, Երասխի անցքումը քրդի կեռակտուց սրբին մատաղ եղաւ արթուն և անձնադիր հովիւլ՝ երկու քուրդ սպանելուց յետոց:

Պատմութիւնը կարճ է. քրդերը չէին թողնում հօտն այս կողմն անցկացնել, ոչխարի յառաջը կտրեցին չորս ձիաւորով. Գողէն իւր կօմբալազլուխ դադանակով (հովանական ցոռն) երկուսին մի-մի հարուածով ձիուցը գահավէժ կործանեց, երրորդի սրից ինքն արիաբար ընկաւ:

—Մեղք է նաչար Սալբին, ասաց մի օր Պողոս աղան Ալմաստ խամթունին, հերիք է ինչքան որ խեղճը չարշարուեց մեր դրանք, մեր տան քամակի աւերակներից երկուսը ծածկենք, իրան տանք, մի աշխատասէր, տնարար այրի տղամարդ ճարենք, ամուսնացնենք, թո՛ղ գնան իրանց արևի ճայնն ածեն. այս երեխան էլ կը մեծանայ, իրանք էլ նոր երեխացք կ'ունենան, իրանց մի կտոր հացը կ'ունենան:

—Զեմ կարծում, որ մարդու գնաց:

—Ընչո՞ւ համար, Սալբին դրաւիչ է, աչքերը սե, թշերը կարմիր, հասակը բարձր, անձն առողջ, մէջքը հասա, ոսկրը պինդ, գործի կալչելուս էլ՝ կարծես հում հում է ուզում բանն ուտել, ընչի՞ պէտք է մեր դրանք օրը սե անի, կեանքք փչացնի:

—Ես միայն իմ մեռնելու օրը չեմ կարող իմանալ, պարծեցաւ նոյն երեկոյին Ալմաստ խամթունը Պողոս աղայի մօտ. Կօթը ժամ գայի աւետարան կարդացի Սալբու զլիին, իրան սպանում է, այսուհետեւ, ասում է, իմ մարդն, իմ ուրախութիւնն, իմ միիթարանքն էս մի մատու երեխէն է. Եթէ իմ աղէն իւր քաղցր աչքովն ինձ էդ լաւութիւնը կամենայ, երկու ծածկի աէր անի, մինչեւ մահս քանի կամ, օրական մի հաց կ'ուտեմ, մինն իմ աղայի բարելաւ ութեան համար մատաղ կը տամ:

—Թող իւր ասածը լինի:

Եւ Պօղոս աղայի հրամանաւ կարձ միջոցից Սալբին իւր սեպ-  
հական յարկի տակն էր տաժանելի աշխատանքներից հանգիստ առ-  
նում:

## Դ.

## ԴԻՄԵԱՑ ՄՐՈՒԱԿԻ ՀԱՄԲՈՅՐՆԵՐԸ

Երկրը փոխուեց, ոդ ու ջուրը փոխուեց, մարդիկը նոր, սո-  
վորութիւնները նոր, աշխարհի տեղադրական պայմանները նոր: Զա-  
նազան Պօղոս ու Պետրոս աղաներն իրանց օրերը լցրին, հայր Աքրա-  
համու նահապետական զողումը հանգստացան, սեպհական աշխա-  
տանքը, զոյտ թեան խնդիրը աստիճանաբար յառաջ եկաւ և շատերի  
թուումը Սալբու և իւր խմորակեր փոքրիկի համար սրահանջ դարձաւ:

Գնացին Կարբի գաղթած աղաների հարստութիւնները. փոք-  
րիկ գիւղը, կարձ միջոցում, չեր կարսղ մրցել նահանգական քաղաքի  
հետ. Երեան թողած՝ ո՞վ կը զնար Կարբի առուտուր անելու. իրանք  
աղաներն էլ, որ սկզբումը մեծ յօժարութեամբ, առանց երկար ու  
խորը մտածելու, կենդրոնից բաժանուել և կարբին էին ընտրել, փոքր  
առ փոքր այդ աղաները կամ աղքատացան և կամ երկրի պայ-  
մանների հետ լաւ ծանօթացան ու քաշուեցին ոմն ալտոեղ և ոմն  
այնտեղ, մի քանիսը զաղթեցին Գիւմրի, որ արդէն նոր մկրտուել  
էր և հին թուրքական անունի տեղ Ալէքսանդրօպոլ շքեղապահնծ  
անունին էր տիրացել, մի մասն էլ Երեան գնացին, խանութների ու  
կայանքի տիրացան:

Կարբումը մնացին շքաւոր և բանւոր դասակարգը և միջակ-  
ներից մի քանիսը: Առաջիններին վիճակուեց երկրագործութիւնը,  
միջակները փորձ փորձեցին Հին Կարբու շուկացատեղի մի կարդ առ-  
ւերակները շէնացնել, խանութ նստել և առեւտրով պարապել:

Ոչ մինը և ոչ միւսը նպատակներին չը հասան. Հողը սակաւ էր  
Կարբումը, վարուցանքսի տեղ չը կար, տարեկան ուտելիքին չեր  
բաւականանում ցանածները. ժողովուրդն ստիպուեցաւ օրավարձ  
մշակութիւնով պարապել, մի քանիսն էլ խուրջնի մէջ չարշու-  
խուրդավագ թ (գերեզմանի հանր տարրանու) դրած՝ գիւղերն ընկան, ու-  
քերի կաշին մաշելով թափառել սկսան. իսկ միջակ դասը խանութի

դրամագլուխը խժուեցին, օրն եկած վաստակով ապրել : Հե կարողացան, սրանը էլ ասորին գեղջուկի կարգն անցան:

Թէ, կարբեցւոց և թէ շրջակայ զիւղականաց օրավարձ մշակութեան զլաւոր կինդրոնը այգեշատ Աշտարակ զիւղն է:

Զեռն անցկացաւ. գարնան անուշաբոյր հոտը փչեց թէ չէ, Աշտարակի ճանապարհը կենդանութիւն կը առանայ. կարբեցի, Յովհաննու-վանքոցի, աբարանցի, մօտակայ պարսիկ զիւղացիք չոր հացը գութիներում, միջքներին կապած՝ լցուում են Աշտարակ՝ օրավարձ բանւորութիւն անելու, զլուխ և ընտանիք պահելու:

Տղամարդի, կինարմատի, մեծի, փոքրի, ամեն չափահասակի համար գործ կաց իմ սիրելի Աշտարակումը. ծով է, հօ զիւղ չի: Եւ այդ ծովի մէջ արձակ լողում են ալիքների կոհակների պէս, նեղ փողոցներումը ծփում են օրն ի բուն աշխատանքի և հացի կարօտ խուռն բազմութիւնը: Ուսուցուց կոչուած փոքրիկ հրապարակը (Աստուած հրապարակ համարի') զինաւոր ժողովասեղին է օրավարձ մշակների. իրարանցում, ճիչ, ազաղակ ականջ են ծակում՝ մարտը սկսելուց մինչև խոր աշունքը Ուսուցումը առաւօտները շատ վաղ: Զի տեսում կէս ժամ, արեգակի զլուխը փայլելուն պէս՝ Ուսուցումը մի մշակ չես գտնում, բոլորը վարձուել են, բոլորը քաշուել են այդիները:

Հին ժամանակը հում նիւթ էր մշակի վարձառորութիւնը, Աշտարակի մեղրածորան պտուղները, քաղցրախում զինին և գրգռիչ օղին էին աշխատանքի զինը. այսօր այնպէս չէ, այսօր ամեն ծառայութիւն փողով է վճարուում:

Միայն փոքրահասակ երեխացքն ու պառաւ կանայքն են, որ ահղական բերքի հետ են փոխարինում իրանց աշխատանքը: Այսօր արքատ պէտք է ժողովուի, վաղը ծիրան պէտք է հաւաքուի, աներումը բուրդը՝ այզիներումը քար պէտք է մաքրուի ու գզուի. այդ բաները պատաւների ու մանուկների գործն է. կ'անեն, կ'աշխատեն, կ'ուտեն և Աստուծու տուած եկամոից շաբաթուայ վերջը, կամ ամեն երեկոյ, իրանց վարձը կ'առնեն լիուլի ու կերթան:

Միայն հեռաւոր աբարանցին է, որ շարաթով մնալու պայմանաւ է տեսնում իւր պատրաստութիւնը: Վայ այն պատրաստու-

թեանը. ինքն է՝ իւր քրքրուած ջուրբէն ու անթարին, իւր քօլզն ու իւր տրեխները ու մէկ էլ մի ձեռաց դադանակ. ոչ շալակին պաշար կայ, ոչ զրպանումը կոսէկ, քաղցած փորով գալիս է, կուշո վերադառնում. իսկ մերձակաց գիւղացիք առաւուր գալիս են, երեկոյին վերադառնում:

Տարուան խստասիրտ եղանակը, դասոնաշունչ ձմեռն իւր բոլոր անողոք սաստկութեամբը նոյնպէս չի կարողանում յաղթել Աշտարակի սիրահար ացցելուներին. Զիւնը դազուկէս նստում է, բուք ու բորեազը աջ ու ձախ զզզալով ճանապարհների հաղորդակցութիւններն ընդհանում են, Արարանը անդրովիխանեան անմասակի աշխարհ է դառնում, իսկ Աշտարակի ճանապարհը երբէք չի կատուում: Կենսատու հեղուկը — ոսկրներ տաքացնող գինի — արազը մագնիսի պէս իրանց են քաշում իրանց երկրպագուներին:

Յեցը կը քրքրի մի որոշեալ թիւ Յովհաննու-վանքցու, կարբեցու, մանաւանդ մողնեցու մարմինը, եթէ շարթի գոնէ երկու օրը մի գաւ ձեռքին՝ Աշտարակ չ'իջնի:

Առանց յարգելի պատճառի չը շեշտեցի մողնեցնց վերայ, որոնք Աշտարակի ամենամօտ դրացիներն են, և այդ հանգամանքը իրանց թշուառութեան զիխաւոր պատճառներից մէկն է. ամառ և ձմեռ մողնեցին ծովը, անգործ, անբան և աղքատ է, նորա հողերն ուրիշներն են վարում, որովհետեւ սուրբ Դէորգի ուղտատեղին տաք մատաղով է կշտացնում մողնեցու փորը, Աշտարակն իւր մարսեցուցիչ խմիչքներովն է լրացնում նրանց հաճոքը. զի՞ժ է ուրեմն մողնեցին՝ երկիր վարի, քրտնի, չարչարուի և տնտեսութեամբ պարապի: Անծանօթ աչքն էլ դժուարութիւն չի կրիլ զանազաներու բնիկ աշտարակցիներից գիւղի նեղ նեղ փողոցներում մի տանից միւս առւն մուտ ու ել անող օտարականին:

Սրանք ահա՛ վերոյիշեալ Բաքոսի պաշտօնեաներն են, որ ձմեռուայ հետ համբերութեամբ կոփւ տալով, մի տեսակ քցել են իրանց Աշտարակ և ծամնօթների տներն են ացցելում:

Տալիս են նոքա սովորական բարել հիւրատէր տան տիրոջը և քուրսու ներքին կողմումը առանց համեցէքի չոքում, ձեռքները կոխում գիւղացու. այդ միակ տաքութիւն դահող փալամներով ծածկած թախորի տակը:

— Ե՞՞ի...  
 — Խ՞նչ կաչ, սանահեր Բարսեղ:

— Խիստ ցուրտ է, զողմանի եմ դիպել:

Մեր հիւրն իւր խօսքը հասաստեմ է մարմինը սրթարթացնելով  
և ատամները իրար բաղխելով:

— Կը մրաես, ի հարկէ, քարերն էլ սառուց են կտրուել, իսկ  
քո միադ հարիւր տեղից բաց երեսում է. հէ՛ր օրհնած, վրայիդ  
արխալզահինը, տասը տարի է, հետդ անբաժան եղբայր է. կնոջդ  
աշքերը հէնց իմանաս ձիւնը տարել է, աղբանոցումը լիքը փալաս-  
փուլուս է, թող հաւաքեն, կարկատեն, մէջքները հօ չի՝ կտրիլ,  
բան ու զօրծերի անունն ինչ է, քարդահի տակ են նստած, թէ  
խնոցի են հարում:

— Ե՛հ... ինքաւոր Ազօ՛, մինն ասում ես, միւսը թողաւմ. երե-  
խայքս քաղցած ճաշին են քնում, տանը բրդում չը կաչ,  
ո՞վ սիրո ունի իւր գլխի ճարը քաշելու. Տանը որ հա-  
ցի կտոր լիներ, գլխիս ի՞նչ թառ էին կոմել էս ցուրտ ու բուք վախ-  
ուը, էս պարզկաց օրը տանից դուրս գալու. եկել եմ քեզանից մի  
քանի շահի խնդրեմ, ալիւրի տամ, շաղախենք, երեխեքանց բե-  
րանը քցենք:

Հատ է լսել աշտարակցին իւր սանահեր մազնեցի Բարսեղի  
խօսքերը. նա ընչացքի տակին ժպտում և հրամայում է կնոջը,  
հարսին, աղջկանը զինու դդմեաչ սրուակը կարասիցը լցնել ու սա-  
նահեր Բարսեղի մրաած անձը տաքացնել:

Մոռացուեցին այնուհետև ընտանիք, կարիք, մերկութիւն. մեր  
սանահերը մի շարք մեծ պասից երկար օրհնութիւնով սրուակի  
կոթը բերանին մօտեցրեց, մինչև յատակը քամեց և մաքրատէր կատ-  
ուի նման շրթունքները լպատելով, արխալզի քղանցով էլ ընչացքը  
սրբեց:

— Անո՛ց:

— Կեանքդ խօ՛ց, Աստուած օջախդ շէն ու շէն պահի, հէրդ  
դրախտի մէջ հայր Աբրահամի գոգումը ծլվլաց. հիմի գնամ տես-  
նեմ՝ ի՞նչ եմ անում, ասում է մեր Բարսեղը, տեղիցը վեր կե-  
նում, մնառ բարել տալիս կնքաւորի տանը:

— Մի կտոր կակուղ հաց ու սոխ բե՛ր, խանում բա-

ջի՛, ինդրում է Բարսեղը մի երկրորդ տան դրումը ցամաքեցնելուց յետով, այսօր բերանս նշխարք չի մտել, ինքս էլ շատ ուշացայ, օրը մթնեց, ոտներիս ոյժը մի քիչ տեղը բերեմ ու դպաս տուն ձգուեմ:

—Այս գաւն էլ լցրեցէ՛ք, առաջարկում է Բարսեղը մի ուրիշ տան, նոյնպէս դրումի հետ համբուրուելուց յետով, եղբայրս սաստիկ մրսել է, հիւանդ է, քիթը բռնես՝ հօգին կը փշի, էս սօր առաջին անգամն աչքը բացեց և դինի ուղեց. փոխարէնը գարունը մի օր կը գանք կը բանենք, մի բանւոր ինձ վրայ ունենասաւ:

Գաւը լցուեց և տիրոջ հետ ճանապարհ ընկաւ դէպի վեր:

Երեսում է, ցրտի սաստիկ ոյժն է բորբոքիչ հեղուկի զօրութիւնը պակասեցրել, ապա թէ ոչ, այսօր հինգ վեց լիքը դրում նորա բերանին է կպել, դաստարկ յետ տրուել, զինի է, հօ ջուր չէ՛: Անծանօթը ոչինչ չի նշմարիլ Բարսեղների քայլերից. սովոր աչքը միայն քամակից կը դիտէ, կը ժպտայ:

—Հիմքդ հաստա՛տ մնայ, Աշտարա՛կ, միմեանց ցոյց տալով ասում են գնացրդի ետևից. տե՛ս ինչպէս մուկը Բարսեղին ասլան է կտրացրել, կաքաւի ոտներով է Մողնու թումբը (Քարչըստանութանիւսնը) սորոր տալով՝ դէպի վեր քշում:

Բարսեղներն իրանց պայմանին հաստատ են. նրանք փորի գերի են, վաղ գարնանից մինչև ուշ աշունք նրանք ձմեռուան գաւերի վճարքն են յետ տալիս, մի կուզէկ նրանց գրպանը փող չի մտնում. շատ էլ արիւթեամբ գործում են, երբէք էլ իրանց ընտանիքի մասին մտածել չ'ունին, երեխնացքը տանը քաղցած ու տկոր կոտորուին, միայն թէ զինու դրումը նրանց հետ յաճախ համբուրուի:

## Ե.

ՏԱՄԲ ԿՈՊԵԿ, ԿԱՄ ԵՐԵԲ ԱՐԾԱԹ ԿՈՊԵԿԱՆՈՑ

Երեկոյ է. աշնան բարեխառն և մեղմ երեկոներից մէկն է:

Աշտարակից դէպի Աբարան տանող դարիւթուսը լիքն է հարիւրաւոր հետեւակ կին ու մարդ, մեծ ու փոքր ճանապարհորդներով. բոլորի երեսը դէպի Մողնի և թիկունքը դէպի Աշտարակ է:

Հեռացողները շատ ուրախ են. զուարձախօսութիւն, կատակ, օրուան թարմ անցքեր բարձր բարձր սլատմուռում, լսուռում, ընդհատուռում և շարունակուռում են:

Ուղևորների ամեն մէկի ձեռքին, ուսին, միջքին մի ծանրութիւն կայ, ոչ մինը դատարկ ձնոքով չի վերադառնում. մի քաղլակ, մի կապոյ, մի տկնոր, մի գաւ, մի գալար խաղողի մատը՝ քանի մի ողկոյզ յախնթանման խոշոր ու դեղին խաղողներ վրէն շարժուելիս, վերջապէս մի ծառի չորուկ մէկի կամ միւսի բեռն է համարուռում. իսկ ամենքի գոտուն ցցած՝ թիկնամիջին երեւռմ է մի մի կեռակտոց, լայնաբերան հօտոց-դանակի:

—Տօ՛ շուտ շուտ քէլէ՛ք, տղէնե՛ր, արեն էլ գնաց իւր մօր ծոցը մասւ, անուշ քուն եղաւ, մենք զեռ ճամփին ենք, ասում է մինր:

—Տօ՛ եաման, ձե՛զ զուրբան, մէջքս կը նմանի կոտրած մանգաղ, էնքան եմ աշխատել. տիրամեռու խաղողի ճժեր, կասես, մարդու աչքից կը փախնեն, թվերի տակ կը պլատին:

—Զանը ելնի՛ տիրոջ, հօրս մա՞լն է, ընչի՞ եմ ընձի չարչարմանք եմ տալում եմ, ևս իմ ջանին զօռ չեմ բերում եմ, աչքիս առած քաղում եմ, սարաթի մէջ եմ թալում եմ (յգել), ֆեացող թօ՛ մնայ, էգուց մէկլօր մեր ճժեր թօ՛ երթան պտուղ էնեն բերեն:

—Տօ՛, ծուռ ճժե՛ր, դուք ի՞նչ կէնէիք, հարցնում է մի երրորդը երեխաններից մէկին, միւսին:

—Հոգիս բերանս հասաւ տիրամեռու խշմար (Կեցուէ) ժողվրտելով. առած հախս էս փշուր խաղողն ա, տրտնջում է մանուկը:

—Տղա՛յ, Բղդէ՛, դո՞ւ դոր կը բանիր, դարձաւ երեխաններից մինը դէպի մի երկու բուգէ յառաջ իւր հետ հաւասար քայլող մանուկին:

—Եա՛, սատանա՞յ էր, զե՞էր, հալածակուեց, զետինն անցաւ, զարմացմամբ ակսեց աչքերը մանուկների մէջ մանածել և որոնել խօսդը, երբ Բղդէ կոչուածին ոչ մի տեղ չը տեսաւ:

—Տօ՛, ի՞նչ եղաւ, մկա (Կիմա) չէ՞ր բերան ծռուկ Բղդէն քաշ կը գար խլա մեզի, կը նմանէր քեարվանից յետ մնացած ուղուու քեօշակ:

—Տօ՛, ո՞ր մէկին կը խարցուս, ո՞ր:

—Տօ՛, Պօղոս աղենց Սալբու տղայ Բղդէն չէ՞ր հէնց հիմի մեր քամակից զի գար ու չի երեար:

—Ահա՛ Բղդէն, ցոյց տուեց մի ուրիշը բոլոր ճանապարհորդներից շատ յառաջ:

Եւ արդարեւ, Սալբու տղայ Բղդէն այժմ տասը, տասն և հինգ տարեկան մանուկ էր և կարողանում էր մօրը պէտք դալ:

Այսօր էլ Աշտարակու քաղլորների հետ էր և տուն էր վերադառնում:

Նատ անհանգիստ էր Բղդէն այս երեկոյ. նա Աշտարակից դուրս գալուս ամենքից յառաջ էր գնում և բոլոր քաղլորներից հեռու էր մանգալիս, երբեմն երբեմն կանգնում էր նա և յանկարծ որարդի հըրացանից ազատուած նապաստակի նման մին աջ խլզկոտում, մին ձախ, հէնց իմանաս ինքն իւր սոսուերից վախսենում էր:

Մի մին էլ ոտը քարշ էր ձգում և բւռնցք արած՝ ձախ ձեռքը արխալղի սլատուած գրսպանից դուրս հանում, բութ և ցուցամատաները քիչ յետ բաց անում, բռնումը ամուր սեղմած առարկային խորազննին աչքով մտիկ էր տալիս ու էլ յետ ձեռքըն աւելի պինդ հուզ տալիս ու զրսպանը կիխում:

Կարծես թէ վախսենում էր Բղդէն, թէ բռի մէջ բանառարկուած իրը թե կ'առնի, կը թռչի, աղի պէս կը հալի, կ'ոնչանայ, կամ ուրիշների հետաքրքրութեան առարկան կը դառնայ, կը խլուի իւր ճանդիցը:

Նոր չէր, որ անցայտ ցեցը բնակալել էր Բղդէի բռան մէջ:

Վաղ առաւատից, երբ նա վարձուեց մի աշտարակցու խաղողը սլահող նեցուկները ժողովելու, նորա ձախ ձեռքը յետ շը բացուեց:

Մի կողմից նեցուկներն էր ժողովում աջ ձեռքով, միւս կողմից յաճախակի ձախ ձեռքից աչքը չէր հեռացնում:

Եւ ի՞նչպէս քաջացել, կորիհնացել էր այսօր մեր անտաշ մանուկը, ինչ եռանդով գործում էր: Բացի իւր գործից՝ նա մնացած խաղողներըն էր պտուղ անում և այգու տիրոջ կթոցը լցնում:

Այգետէրը քանի՞ց նկատեց նրան, ասաց Բղդէին, որ իւր արած պտուղը՝ իւր գործ ողկոյզներն իւր կօզօվի մէջ դնէ, իրան համար պահի, հասկացրեց, որ այդին քաղելուց յետոց ամեն աղքատ իրաւունք ունի մտնել, քաղլորի աչքից վախած, տերեւների տա-

կին մնացած ճիռերը քաղել, իւր համար տանել, բայց Բղդէն անխօս, զլուխը բացասաբար թափահարում էր և գտած, պտուղ արած խաղողները տիրոջ խաղողին էր խառնում:

—Դու հօ քո վարձն առացել ես, ասաց երեկոցին այգետէրը Բղդէն։ բայց որովհետեւ այսօր, երեխայ տեղովդ, դու հինգ մշակի դործ ևս կատարել, տուր քո կողովդ խաղող լցնեմ, առ, գնա։

—Ասուած քո մինը հազար անի՛, ես ոչինչ չեմ ուզում, մերժեց Բղդէն և խոր զլուխալով՝ կամենում էր հեռանալ։

Նառ խօսեց, շատ համոզեց այգետէրը, բայց Բղդէն ևս առաւել խոնարհ երկրպագութիւններ էր անում։

Նա արդէն բաւականին հեռացել էր։

—Բղդէ՛, Բղդէ՛, ձան տուեց յանկարծ այգետէրը, մի բովէ լետ արի՛, բան եմ ասում։

—Ահա՛ այս երկու շահանոցը (երեւ կողէն) քեզ, իսկ իմ առաւտեան տուած մի շահին ինձ տուր։ Խղճմանքս ինձ հանգիստ չի տալ, ողջ օրը դու մի չուրուկ շահով (Քէրուէն կողէն) բանել ես, օխար մարդի աշխատանք ես արել, նրանց ամեն մինը իրանց վարձը լիուլի ստոցան, իսկ դու մի ճութ խաղող դնէ չը վերցրիր և որքան նկատեցի, չի էլ կերար։

Այ հրաշք. մարդը հանեց իշխ պայտից մեծ մի պղնձագրամ. տասը կոպէկ էր դրած նորա վերաց, և այժմեան երեք կոպէկի արժէքն ունէր։

Բղդէն ամբողջ մարմնով սկսեց դողդողալ, նա վրայ պրծաւ, բարերար ձեռքն երեք անգամ համբուրեց, յետ բաց արեց բոլոր օրուան սեղմուած ձախ ձեռքը, յետ տուեց մէջը պահած կոպէկուկիստոց պղնձեայ դրամը և փոխարէնը կրկնակի մեծն ստանալով տուաւել պինդ սեղմեց ու հազար շնորհակալութիւններով հեռացաւ։

Ահա՛ հէնց այս պղնձեայ դրամն էր Բղդէի խաղաղութիւնը վրդովդ անքուն սատանան, այդ ամենաթանկագին գանձն էր նա խնամով փայփայում, նորա հզօր զօրութիւնն էր իւր ոտքերի ոյժը կրկնապատկող և եռապասկող։

Քաղւորները կէս ճանհապարհը չէին դեւ կորել, որ Բղդէն մոտաւ Կարբի։



### Ք Ի Ս Ա Գ Ի Բ Ի Ե Ւ<sup>1)</sup>

Սալբու բազմադիմի պահանջներին խուլ գանուեց սիրական զաւակը. նա, ըստ սովորականին, ոչ վախկի քերեղանին մօտեցաւ, ոչ ամեն գիշերուան նման ուրախ ու զուարթ պատմութիւններ արեց, ոչ իւր բերած խաղողի ճռեթը քնքշաբար մօր բերանին մօտեցրեց, մօր բերանը ջրակալացրեց։ Այս բանից և ոչ մինը չ'արեց Բղբէն. ընդհակառակն՝ թեթև զլխացաւը պատճառ բերած՝ շորերով վայր ընկաւ մօր շինած անկողնի վերաց և աչքերը փակեց։

Մայրական գորովալից խանդաղատանքը այնուհետեւ ի՞նչ կը հանգստացնէր Սալբուն. խեղճ կինը մոլորուեց, պաշարուեց, այս ու այն կողմը դիպաւ, ել տանը հին ու նոր ժը թողեց, փալաս ու հացի մեզար չը մնաց, բերեց որդու վերաց ծածկեց։

Զիթի ճրագի աղօս լոյսը վազուց իւր պաշտօնը կատարել էր, ձէթը այրուել, վերջացել էր, պատրուզի դառը միտի հոտը տանովը մին էր եղել, մթութիւնը տիրել էր, բայց այդ ամենն արգելք չին կարող լինել որդեսէր մօրը՝ իւր զաւակի կողքը կորել, ձեռը ծնօտին զնել և հաղարաւոր բարի ու չար մտածմունքների մէջ ընկղմուիլ։

Անսեղի չին Սալբու կասկածանքները. Բղբէն տաքութեան մէջ կրակ է կտրուել, բերանից արտահնչուած գոլորշին մօր երեսն է այրում, չնշառութեան հեկեկանքը նետի նման ներս է սպանում մօր այրուող սրտի խորքը։

— Եօթն անուան տէր սուրբ Կարապետ, իմ ձեռքս եմ թալեր եմ քո փէշ, Մողնու զինաւոր սուրբ Գէորգ, մուրատասու Յաշու սուրբ Սարգիս, իմ Բղբէխս կռանը կենաք։

Խեղճ կինը Կարբու շրջակայքի պաշտպան սրբերի հետ մաքումը

1) Քիսապահի նշանակում է քսակի լատակ։ Ամեն ոք իւր փողի քըսակի մէջ սպանում է անպատճառ որ և է հին զրամ, կամ մի աննշան պըղընձադրամ, որի բարերազդ զօրութիւնը, իրը թէ, փորձած է. Փոքրիկ փաղը բսակի հիմնադրամն է, նա իրբէք չի ծախսուի, նորա կորչէլը աղքատութեան և սնանկութեան աղէտաւոր նշան է։

ժողովեց իրանց երկրումը թաղած բոլոր Թուլս-մանուկներին, Աւրաբաթ-գրերին, Կարմիր ու Սև աւետարաններին. մէկին խունկ ու մոմ, միւսին սե հաւի մատաղ, երրորդին կիրակմտոցի լոյս էր ուխտում ու իւր Էղդէին առողջութիւն խնդրում:

Նա մի քանի անգամ դուռը բաց արեց, երինքին նայեց, ասազերի նշանները դիտեց:

—Ի՞նչ անեմ, գնամ նանի-Յարթենենց դուռը թակեմ, երկար պառաւին զարթեցնեմ, ոտքերն ընկերմ, աղաչեմ, բերեմ Էղդէիս աղօթել ասմ, մտածեց նա:

Ծուսահասութիւնը ողորմելուն յետ է կասեցնում. ժամանակը շատ ուշ էր, Կարբու ոտքը խաղաղուել էր. ամենքը գործից ու աշխատանքից յոդնած՝ խոր քնի մէջ մրափում էին. Ժիր մշակը ցորեկը մինչև իրիկուն անլնդհատ վաստակելուց յետոց՝ հաւերի հետ է քուն մտնում, հաւերի հետ է զարթնում:

Մարդ, կին, մեծ ու փոքր անուշ խումխացնում էին. տեղ տեղ գուցէ այս ու այն տանը փոքրիկ անհանդիսատ մանուկները օրօրոցից մօր քունը կտրում էին, ճիչ ու ծուրցով մայրերի ականջներն էին ծակում, զարթացնում էին, թաւիշի պէս փափիկ ստինքի քաղցր աղբրականը ամուր փակցնում իրանց շարմաղիկ շրթունքները և մղմղալով ներս տանում անուշահամ կաթը. բայց զրանով երեխայքն իրանց նորատի մայրերին երբեք արգելք չէին լինում հէնց օրօրանի լծանը թեկներու և մի հանգ քնիլու. ընդհակառակին՝ սիրուն զաւակի պուշների միատեսակ շարժումը մի ախորժական զրգումունք էր պատճառում խանդակաթ մօրը և զգուշութեան հետ մի զգաստ քուն էլ բերում էր, երջանիկ երազների եթերական սահմաններում էր պատեցնում նրանց երեակայութիւնը:

Գիշերը շատ խաղաղ էր, ձախ ու ձուն չը կար, աւերահների միջից միայն պարբերաբար լառում էր մելամաղձոս բուի տիսոր վոյն ու վայր:

—Ե՛հ, ես ի՞նչպէս անհանգիստ անեմ նանի-Յարթենենց պառաւին, փնթփնթաց իւր մէջ Սալբին, լաւն այն է իմ գիտեցած չար աչքի, չար նիսաթի աղօթքով բաւականանամ՝ մինչև լուսոց շառաւիղը ամեն հայ քրիստոնէի հետ իմ տան երդկովն. էլ ներս կը մոնի:

Առաւ Սալբին մի ասեղ, նատեց Էղդէի զլիսավերելը, ասղի ծայ-

լով շարունակ Խթխթեց տղացի գլխին ծածկած բրդեաչ հաստ  
մեզարը և երեք անգամ մրմնջաց հետևեալ ազօժքը.

Այժանիա՛, Ազարիա՛,  
Հրէս եկաւ Հռիմսիմէն  
Օլսոր զաթար (շաբթ) ջորով,  
Օլսոր պոչ քուռակով.  
Զար աչքը՝ չար փուշ,  
Զար փուշը՝ չար աչքը:

Աղօթում էր, յօրանջում էր, յօրանջում էր, աղօթում էր և  
հեան էլ լնդհատելով՝ բարձր ճայնով կրկնում էր. պատոին ու թափ-  
ուին իմ բղդէիս աչք զարնողի ջուխա աչքի պառւղները:  
—Ադէ՛, կանչեց աղօթքից յետոց հիւանդը:  
—Զանէ՛, աղէն հէլրա՞ն արեւուդ:  
—Էղ ի՞նչ ես անում ես:  
—Քեզ աղօթում եմ, հոգի ջա՞ն:  
—Ո՞ւ մնից ես սովորել:  
—Ժամկոչ Յովսէից:  
—Ժամկոչն ո՞ւ մնից է սովորել:  
—Գրքէենց Նողոյ հարսից:  
—Էղ ի՞նչպէս բան է:  
—Նիաթի (չափ աչքի) աղօթքը տղամարդը պէսք է կինարմա-  
տից սովորի, կինը մարդից, թէ չէ զօրութիւն չի ունենալ:  
—Սիրոս նեղանում է, բաց արա՞ գլուխա, ասաց վերջապէս  
բղդէն. դուրս դնա՛, տե՛ս, զիշերուայ ի՞նչ ժամանակն է:  
—Դեռ շատ զիշեր կայ, դեռ կէս զիշերը նոր է անցել:  
—Լուս-աստղը դեռ չի՞ դուրս եկել:  
—Դեռ Նամփուր-կշիռքը երկու չուանաչափ է հեռու Բա-  
ղումքից, դեռ Լուս-աստղի ընկեր 12 հուրհուրատող աստղերը նոր  
էն զիիները հանում, որ Լուս-աստղը դուրս գալու՞ ամեն կող-  
մից բարեւ տան նրան:  
—Ո՛չ, ինչքա՞ն զիշեր կայ դեռ, երբ պիտի Լուս-աստղը դուրս  
գայ:

Բղդիկն, ինչպէս և ամեն մի դիւզական մանուկին, քաջ յալոնի էր համաստեղութեան գաղտնիքը, ամեն մի երկնից լուսաւոր իրանց նշանակութիւնն ունի ժողովրդի աշքում:

Դիւզային դեռ թոթովախօս երեխայութեան մէջն է իւր մօրից, տառից, պապից, ամառ ժամանակը կալերումը և կտուրներումը, բաց երկնքի տակ, քնած ժամանակ դաս առնում աստեղագիտութեան ուսումբ:

Հազար էլ որ պառաւները սրտնեղեն, բարկանան, երեսները միւս կողմը դարձնեն, խոռացնեն, խոռմիացնեն, փնչացնեն, փնչացնեն, զուրէ, չեն կարող ազատուել հետաքրքիր փոքրիկ սատանաների հարցասիրութիւնից:

—Դու քո հնարքը դործ դի՛ր, մենք մերը, մտածում են քաղցրիկ թոռները և պապի կողքերը խստողեցնում, մօրուքը համբուրում, կրծքին բարձրանում, պարանոցովը փարում, խնդրում, աղաչում, զմբուիկ թշիկները ծերի պուօշների վերայ զնում, պաշել տալիս, երկու պաչ էլ պատմելուց վերջը խոստում անում, պապի բարեհաճութիւնն առնում, պատմութիւնն սկսել տալիս և ուշի ուշով ասածները լսում, մաքներումը տպաւորում:

—Պապի ջա՞ն, էն ի՞նչ ասող է, որ քեռոնց կալի զլիսին կանգնած է ու բոլորից պապզանն է, հարցնումէ պապի ծոցին քնող թոռը:

—Էն Քարւան-ղուանն է:

—Սաքի թէ ի՞նչ:

—Էն՝ որ քարւանը դաշտումն է եղած լինում, ամսպը պատած գիշեր է լինում, յանկարծ երկինքը պարզում է, քարւան-բաշին (Հարաւանապէտ) կարծում է, թէ Լուս-աստղն է, քարւանն շտապացնում է, վեր է կացնում ու ճանապարհ ընկնում:

—Յեսո՞յ:

—Յետոյ՝ շատ ա՛ ու զարհուրեկի տեղով պէտք է անցկենալին, զնում են, զնում, լոյսը չի բացուում. մէկ էլ մի խոր ձորի մէջ գողերը դրանց յառաջը կարում են ու բոլորին բրդում, վեր ածում: Աստղը սխալացրեց, քարւանը կոտորել տուեց, անունը մնաց Քարւան-ղուան:

—Իսկ է՞ն ինչ ասող է, որի պոչը, հէնց իմանաս, աստիս ջահրի (Ճակարտի) իլիկը լինի:

— Են Ղոյրուղն է: Ամա՞ն, գառնո՞ւկս, զգուշացնում՝ ուսուցիչ պապը. էլ այսուհետև չը լողանաս, Ղոյրուղն իւր պուովլը քեզ էնպէս կը շամփրի, որ պուը միջքիցդ կը մոնի, փորիցդ դուրս կը դայնա գիտ ասաղ է, լողացողի թշնամի է:

— Հապա մինչև հիմի ո՞ւր էր, չեր երեւում:

— Ղոյրուղը խաղողի ժամանակն է դուրս գալիս. մինչև նա դուրս չը դայ, խաղողը չի հասնիլ: Քե'զ եմ ասում, հօգի՛ս, էլ չը լողանաս:

— Նատ լա՛ւ, շատ լա՛ւ: Կնպէս չի՞, Յակօ՛, էլ չենք լողանալ. պապն ասում է՝ Ղոյրուղը որ դուրս եկաւ, էլ չեն լողանալ: Դառնում է պապի թոռներից մինը իւր հասակակից եղբօրը, կամ անքաժան մի յարկի տակ ապրող հօրեղբօր որդուն և ականջումը փրսփրսում:

Վերջինս տատի ծոցիցն էր եկել դաս լսելու:

— Թող պապին արխէինը քցենք, պատմել տանք, յետոյ մենք մեր բանը գիտենք, փսխում է նա ընկերի ականջին:

— Դէ՛հ, որ պապն ասում է մի՛ լողանաք, մենք էլ չենք լողանալ, մեռնիլ հօ՛ չե՛նք, եկող տարի ամառը կը դայ, նոր կը լողանանք. լաւ չեմ ասո՞ւմ, պապի՛:

— Նատ լա՛ւ, շատ լա՛ւ. դէ որ էդպէս խելօք տղացք էք, եկէ՛ք մի պաշեմի:

— Դէ որ էդպէս է, ասա՛ տեսնենք էն ի՞նչ խորդ ու փորթտեղ է երկնքումը, հէնց իմանաս՝ մեր վերի արտի քարքարուտ ճանապարհը լինի, մանր ու մեծ աստղեր անկարգ, անկանոն շաղ են անցած:

— Են մեր ուլերն են կրծոտել:

— Ո՞րտեղից բարձրացան:

— Մի ձմեռ շատ ձիւն էր եկել, խոս չը կար, որ ոչխարն արածի, մեր ուլերը ձիւնի վրայովլ բարձրացան, կրծոտեցին:

— Հապա դու երէկ ասում էիր՝ դարմանագողի ճանապարհն է, մէջ ընկաւ միւսը:

— Որ գիտէք, էլ ընչի՞ էք հողիս հանում, թողէ՛ք քնեմ, ասեց պապը և ուզում էր երեսը միւս կողմը շրջել. բայց ճարպիկ դմիկներից մէկը իսկոյն լոք տուեց, անցաւ պապի կրծքի վրացից,

միւս կողմին պառկեց և իւր շողոմարար հաճոյախօսութիւնները շարունակեց:

—Պապի ջա՞ն, պապի՛, հէնց է՛ս մէկը, կե՞նտ էս մէկը պատմի՛, էլ զլուխու չե՞նք տանիլ (ցաւացնել):

—Հա՛, դարմանավողի-ճամփէն է, ճարահատեալ սկսեց պապը. մի զիշեր բլրլան Բէլը գնացել էր մեր Հայկ պապի մարագիցը մի թու լիքը դարման դողացել, շալակն առել ու փախչում: Զանս քեզ մատա՛զ, Հայկ պապի՛, շներին քիս էր տուել քամակիցը. ինքն էլ մի բարձր կոնդի զլախի կանգնել էր ու մտիկ տալիս: Բէլը դարմանը շաղ տալով փախչում էր: Մեր խելօք պապը հէնց որ տեսաւ, թէ շները չը կարացին հասնել, դող Բէլը զիմացի սարի քամակն է ուզում անցինեալ ու ազատուել, էն սհամբը դազ ու կիսանոց, կոանս պէս հաստ նետը դէմ քցեց աղեղի լարին, աչքեց ու լարը ձգեց: Նետը սը՛լ...լ...լ... դնաց, էդ դող ու աւազակին ծակեց ու զզզալով անցկացաւ հինգ օրէն ճամփաց հեռու վեր ընկաւ:

—Ցետոյ ի՞նչ է անում Բէլը:

—Խնչ պտի անէր, դարմանի թոռը միջքիցը զլորուեց, պատռուեց, մնացողն էլ կնուեղ շաղանցաւ, երկնքի երեսը բռնեց:

—Խնքը:

—Խնքն էլ զիխի վերայ կունդիկ կունդիկ անելով (Առաջակալով), սարի ծէրից զլորուեց ձորը:

—Հապա տատն ասում էր՝ իծանը որ կրծեցին, երկինքը պատըստրուեց, ջուրը թափուեց, ոչխարի սուրուն խեղդուեց:

—Դէ՛, նա էլ էր ուղիղ ասում:

—Բաս ի՞նչողէս ջրի առաջն առան:

—Աստուած կեանք տայ փալան կարող (Համեպագործ) նոյ պապին:

—Ի՞նչ արեց:

—Փալանը դէ՛ն ձգեց, մախաթն առաւ, Մասիսի զլուսը բարձրացաւ ու երկնքի ձզուածը պինդ կարեց. ա՛յ, տեսնո՞ւմ էք, էն մանր աստղերը մախաթի ծակած տեղերն են:

Ահա այս մանկական դպրոցի աշակերտ էր, ուրիշների թուռումը, և մեր հիւանդ Բղբէն. նա ցանկանում էր իմանալ զիշերուայ ճիշդ ժամանակը. բնական է, որ աստղերի շարժումներից պէտք է հարցներ:

—Աղէ՛, կանչեց միւս անդամ Բղդէն:  
 —Զանէ՛, ի՞նչ կ'ուզես:  
 —Ի՞նչ ծանր գիշեր է:  
 —Մեռնի՛մ արևիդ, Բղդէ ջա՞ն, ընի՛ ես, գէշ-գէշ բաներ եւ  
 մտմուլմ ես:

—Զէ՛ դու մի օր ասուլմ էիր, գիշերը որ ծանր լինի, գիւղումը  
 մէկն ու մէկը մեռած կը լինի, ժամումը մեռել կը լինի:

—Տօ՛, քեզ մեռնի՛մ, Բղդէ ջա՞ն, դու հիւանդ ես, դորա հա-  
 մար է գիշերը ծանր թուում քեզ. որդուն հանգստացնում էր  
 սրտատոչոր մայրը և աչքերը անթարու քղանցքներովը սրբում:

Մի շաբաթ Բղդէն հիւանդ մնաց, աղօթող, գրբաց, ջինդար,  
 ամենքն իրանց շնորհքը ցոյց տուին. սրբերի դռները բոկոտն գնալն  
 էլ չը մոռացուեց. մի սառը քրտինք եկաւ վերան և նա իսպառ  
 ողջացաւ:

Սալբու սրտին ցաւ և գիւղում ասելիք ու խորին դատողու-  
 թեան առարկայ դարձաւ մի հանգամանք:

Ամեն այցելու պարզ տեսնում էր, որ Բղդէի ձախ ձեռքը պինդ  
 փակուել է, մի բոռնցք է դոյացել և չի բացուում. հէնց որ մէկը  
 ուզում էր հիւանդի ձախ ձեռքին դիպչել, նա այնպէս ծուում էր, որ  
 ամենքի ականջն էլ խլացնում էր:

Ամեն գլխից մի խորհուրդ դուրս եկաւ. շատ խոր-  
 հեցին, հնարք չը դառն ձեռքը բանալու, չէին համարձա-  
 կում դիպչելու, ուզում էին, որ ձեռքը հրաշքով ինքն ի-  
 րան բացուի: Երբ ճար շեղաւ, միաբերան վճռեցին, որ խաչից է,  
 խաչը միայն կարող է փրկել:

—Սուրբ Յովիտանիսի աղբրիցն է, վճռեց նետ դնող, մաղ պտը-  
 տեցնող կարճիկ ծուտուն:

Սալբին ուխտեց, որ տղան լաւանալուն պէս, նրան տանի սուրբ  
 Յովիտանիսի աղբրում լողացնի:

Սալբու աղօթքն ընդունելի եղաւ: Բղդէն բոլորովին առողջ է:  
 Նա մօտ կանչեց մօրը:

—Մարէ՛:

—Զանէ՛:

—Մենք խեղճ մարդիկ ենք, էնպէս չէ՛:

— Ի հարկէ:

— Պօղոս ազայենց ամալան ենք:

— Հա՛, բայց հիմա ոչ Պօղոս աղաց կայ, ոչ Մարկոս: Կարբում մնացել են դառը քրահնքով հաց աշխատողներ:

— Ո՛չ, ես ուզում եմ ամալէք ունենալ:

— Խ՛նչ ես ասում, Բղդէ ջա՞ն:

— Այ՛, մա՛յր, լուրջ դէմքով շեշտեց Բղդէն և ձախ ձեռքը յետ բացարեց ու ահագին տասը չուրուկ կոպէկանոցը մօրք ցոյց տուեց:

— Աա՛, սա՛ կը լինի իմ հարատութեան մկիզբը, սա կը լինի իմ քիսադիբին մինչեւ շունչս բերանումն է:

Բղդէն մի առ մի պատեհեց մօրը կեանքի մէջ առաջին անգամ փող աշխատելու հետաքրքիր պատմութիւնը:

— Բայց ացդ երկու շահով դու ի՞նչ դործ պիտի սկսես, տարակուսական հարց տուեց մայրը:

— Այդ իմ գիտնալու բանն է:

— Աստուած սրտինդ կատարի՛:

— Ուրեմն մի փալասի կտոր տո՛ւր:

Բղդէն խնամքով կապեց հին կարկատանի մէջ իւր թանկագին դանձը և դուրս գնաց:

(Աը շարունակւի):